Հաստատված է
ՀԳՊԱ գիտական խորհրդի
2018 թ.-ի հուլիսի 13
№ 4 որոշմամբ

Հաստատում եմ
ՀԳՊԱ գիտական խորհրդի
նախագահ Ա. Իսաբեկյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԻԶԱՅՆԻ ԵՎ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

2018թ.

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ՀԳՊԱ) Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի գործունեության իրավական հիմքերը:
2. Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի կանոնադրությունը ընդունվում է ֆակուլտետի խորհրդի կողմից և հաստատվում է ՀԳՊԱ-ի գիտական խորհրդում:
3. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:
4. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում, կամ լուծարվում է ՀԳՊԱ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
5. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝
   1) հայերեն՝ Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետ.
   2) ռուսերեն՝ Факультет дизайна и декоративно-прикладного искусства.
   3) անգլերեն՝ Faculty of Design and Decorative Applied Arts:
6. Ֆակուլտետի հասցեն է՝ 0009, ք. Երևան, Սարմենի 1:
7. Ֆակուլտետը ՀԳՊԱ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան ունի իրավունքներ և կրում է պարտականություններ:
8. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀԳՊԱ-ի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ՀԳՊԱ-ի մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմնի՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:
9. Ֆակուլտետն ունի կնիք, սահմանված կարգով կարող է ունենալ նաև անհատականացման այլ միջոցներ:

## II. ԴԻԶԱՅՆԻ ԵՎ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

10. Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետը ՀԳՊԱ-ի գիտակրթական և ստեղծագործական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումներից մեկն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով և որի նպատակները ու խնդիրները բխում են ՀԳՊԱ-ի հնգամյա ռազմավարական ծրագրից:

11. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունել որոշումներ, որոնք չպետք է հակասեն ՀՀ օրենսդրությանը, ՀԳՊԱ-ի կանոնադրությանը, ՀԳՊԱ-ի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:
12. Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատանքների բնույթից, ըստ սահմանված չափանիշների կազմում է իր հաստիքացուցակը, որը հաստատվում է ՀԳՊԱ-ի ռեկտորի (այսուհետ՝ ռեկտոր) կողմից:

## III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ՀԳՊԱ-ի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ: Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը:
14. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը ֆակուլտետի խորհուրդն է, որի նախագահը ֆակուլտետի դեկանն է:
15. Ֆակուլտետի խորհուրդը կազմված է ի պաշտոնե խորհրդում ընդգրկվող և հրավիրյալ (պրոֆեսորադասախոսական անձնակազմ և ուսանողներ) անդամներից:
16. Խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, նրա տեղակալ(ներ)ը և ամբիոնների վարիչները:
17. Ֆակուլտետի խորհրդի անդամների թիվը 16-ն է:
18. Խորհրդի անդամների 25 տոկոսը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:
19. Ֆակուլտետի խորհրդի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներին առաջադրում են ֆակուլտետի ամբիոնները:
20. Ֆակուլտետի խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Ֆակուլտետի խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր ցուցակը:
21. Ֆակուլտետի խորհուրդը՝
    1) ընդունում է որոշում ֆակուլտետի կրթական, ստեղծագործական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ.
    2) սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի ընտրությունը.
    3) լսում է ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը.

4) ՀԳՊԱ-ի ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ.
5) առաջադրում է ՀԳՊԱ-ի հոգաբարձուների խորհրդում և ՀԳՊԱ-ի գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչների թեկնածուներին.
6) լուծում է ֆակուլտետի ուսումնական, ստեղծագործական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հարցերը.
7) ՀԳՊԱ-ի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները.
8) լուծում է սույն կանոնադրությունից և ՀԳՊԱ-ի այլ ներքին իրավական ակտերից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական, ստեղծագործական և գիտահետազոտական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

22. Ֆակուլտետի խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ: Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ կամ ֆակուլտետի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:
23. Ֆակուլտետի խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է ֆակուլտետի խորհրդի նիստերը:
24. Դեկանի ընտրության և հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերը վարում է խորհրդի կողմից ընտրված նախագահողը: Դեկանը չի կարող լինել այդ նիստերի նախագահողը:
25. Խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի աշխատակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:
26. Խորհրդի քարտուղարին խորհրդի ընտրությամբ դեկանի ներկայացմամբ նշանակում է ՀԳՊԱ-ի ռեկտորը:
27. Խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:
28. Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով:
29. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը կամ պրոռեկտորը:
30. Խորհրդի կողմից դեկանի ամենամյա հաշվետվությունը լսելու նիստում խորհուրդը քվեարկությամբ գնահատում է դեկանի գործունեությունը: Դեկանի

գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում հրավիրում է խորհրդի նիստ՝ դեկանին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար:

31. Դեկանին անվստահություն հայտնելու խորհրդի նիստի ընթացքում ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում՝ մինչև պաշտոնանկության նպատակով հրավիրված նիստը, խորհրդում նշանակում է նոր քվեարկություն:
32. Դեկանին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում լուծում է դեկանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
33. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները տասն աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ՀԳՊԱ-ի ինտերնետային կայքում:
34. Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե խորհուրդն այլ որոշում չի կայացրել:
35. Խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:
36. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասության սահմաններում, ՀԳՊԱ-ի և սույն կանոնադրության համաձայն:
37. Ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող ֆակուլտետի դասավանդողը:
38. Դեկանն ընտրվում է ֆակուլտետի խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի խորհրդում ամենաշատ, բայց առնվազն մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում ՀԳՊԱ-ի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Ֆակուլտետի դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ: Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ՀԳՊԱ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված՝ դեկանների ընտրության կանոնակարգին համապատասխան:

39. Դեկանի պաշտոնի համար թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և դեկանին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է դեկանի ընտրության ընթացակարգով:
40. Ֆակուլտետի դեկանը՝
    1) ՀԳՊԱ-ի ռազմավարական ծրագրին համապատասխան սահմանված կարգով կազմում է ֆակուլտետի գործունեության տարեկան պլանը և ներկայացնում է դրա իրականացման վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվություններ.
    2) ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունը.
    3) ապահովում է ՀԳՊԱ-ի մարմինների և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.
    4) սահմանված կարգով ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ուսանողներին հեռացնելու, նրանց ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ.
    5) ներկայացնում է զեկուցագիր ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու հրաման արձակելու համար.
    6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ֆակուլտետի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ.
    7) ռեկտորին է ներկայացնում զեկուցագրեր հրամանագրելու նպատակով, որոնք պարտադիր են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:
41. Դեկանն ունի տեղակալ(ներ), որին (որոնց) դեկանի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը:

## IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

42. Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ֆակուլտետում կարող են գործել արվեստանոցներ, լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական, ստեղծագործական ու արտադրական ստորաբաժանումներ:
43. Ամբիոնները ֆակուլտետի գիտակրթական և ստեղծագործական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:
44. Ամբիոնն ապահովում է ուսումնական գործընթացը, իրականացնում է ստեղծագործական և գիտական հետազոտություններ:
45. Ամբիոնները գործում են ՀԳՊԱ-ի կանոնադրության, ՀԳՊԱ-ի իրավական ակտերի և ֆակուլտետի կանոնադրության հիման վրա:

46. Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և ստեղծագործական աշխատանքները:
47. Ամբիոնի վարիչն ամբիոնի կարծիքն ստանալուց հետո մրցութային հիմունքներով ընտրվում է ՀԳՊԱ-ի գիտական խորհրդում՝ 5 տարի ժամկետով:
48. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի ներկայացնում է եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի խորհրդում:
49. Ֆակուլտետի խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչին ետ կանչելու հարցը: Փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշում կայացնելու դեպքում խորհուրդը միջնորդում է ՀԳՊԱ-ի գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը:
50. ՀԳՊԱ-ի գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
51. ՀԳՊԱ-ի գիտական խորհրդում ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը չհաստատվելիս հնգօրյա ժամկետում հրավիրվում է ֆակուլտետի խորհրդի նոր նիստ: Ֆակուլտետի խորհրդի նիստի մասնակիցների ձայների երկու երրորդով ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը վերահաստատելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
52. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են պրոֆեսորները, դոցենտները, ավագ դասախոսները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ համակազմը:
53. Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ստեղծագործական և ուսումնաօժանդակ աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի մշակում է իր աշխատողների ծանրաբեռնվածությունը:
54. ՀԳՊԱ-ի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի, որի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը:
55. Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և ստեղծագործական աշխատանքի այլ տեսակները:
56. Ամբիոնի կրթական, ստեղծագործական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի նիստերում: Ամբիոնի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի հիմնական

աշխատողները: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները:

57. Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան 8 անգամ:
58. Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու գործավարի կողմից:
59. Ֆակուլտետի կանոնադրության հավելվածի տեսքով ներկայացվում են տվյալ ֆակուլտետի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները:

*Հավելված*

**ՀԳՊԱ-ի Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ստորաբաժանումներն են.**

1. Գծանկարի և գունանկարի ամբիոն

2. Դիզայնի ամբիոն
   2.1 Մետաղի գեղարվեստական մշակման լաբորատորիա
   2.2 Մանրակերտի լաբորատորիա
   2.3 Համակարգչային լաբորատորիա №1
   2.4 Համակարգչային լաբորատորիա №2

3. Համակարգչային գեղարվեստական նախագծման և հագուստի մոդելավորման ամբիոն
   3.1 Համակարգչային լաբորատորիա №1
   3.2 Համակարգչային լաբորատորիա №2
   3.3 Համակարգչային լաբորատորիա №3
   3.4 Համակարգչային լաբորատորիա №4
   3.5 Հագուստի մոդելավորման լաբորատորիա

4. Կիրառական արվեստի ամբիոն:
   4.1 Խեցեգործական լաբորատորիա